բայ, որ խառվեալ դրութեան մէջ էր. Ալին գնաց Մարտիրոսաց քաղաքը։ Յոյնք յարձակեցան եւ տիրեցին մուսլիմների երկրի կիսին. այն ժամանակ երկրի բնակիչք դուսարեցան Ալի ի. Եահեա՛ի մօտ, դրդելով նորան եւ պահանջելով՝ պատերազմել Յունաց հետ։ Ալի արշաւեց նոցա հետ, ճակատեցաւ յունաց զօրքի հետ սաստկապէս եւ սպանեցաւ։ Յոյնք իբրեւ մեծ յաղթութեան նշան վերցրին նորա մարմինը։

Ե. Իբն-էլ Ամիր։

Իբն-էլ-Ամիր Շայբանի (հեղինակիս լրիվն անունն էր՝ Իզզեդդին Աբուլհասին Ալի ի. Աբուլ-կարամ Մուհամեդ ի. Մուհամեդ ի. Աբդուլկարիմ ի. Աբդուլվահիդ) ծնել է 555 թ. Միջագետքի Ջեզիրէ ի. Օմարում։ 576 թ. նա դաղթեց իւր հօր հետ, երբ վերջինս իւր վարած կառավարչի պաշտօնից զրկուեցաւ, Մոսուլ, ուր նա իւր գիտական կրթութիւնն վերջացրեց։ Այստեղից նա քանիցս այցելեց Բաղդադ՝ երբեմն իբրեւ ուխտաւոր, երբեմն եւս իբրեւ Մոսուլի իշխանի դեսպան, լսելով այստեղ ամենայայտնի ուսուցիչներին։ Ապա նա ճանապարհորդեց Ասորիքում եւ յաճախեց Երուսաղէմ, մասնագիտորէն ուսումնասիրելով ժողովրդական աւանդութիւններ, հին եւ նոր պատմութիւն եւ արաբացոց տոհմաբանութիւնները։ Վերադառնալով Մոսուլ նա իրեն միանգամայն նուիրեց գիտական պարապմունքներին. նորա տունը եղաւ ժողովարան տեղացի եւ ճանապարհորդ գիտնականների համար։ 627 թ. նա գնաց Դամասկոս, այնտեղից Հալէպ, ապա վերադարձաւ կրկին Մոսուլ, ուր նա մեռաւ 630 թ.

Հեղինակիս գլուխ գործոցն է՝ Համաշխարհային պատմութիւն աշխարհիս ստեղծումից մինչեւ 628 թ., որ հրատարակած է Carolus Johannes